ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

ԲԱՌԱՐԱՆ

ՑԱՆԿ

Ա 3
Բ 4
Գ 5
Ե 5
Ը 6
Կ 6
Հ 7
Մ 8
Ն 9
Պ 10
Ս 10
Վ 11
Ք 12
Ռ 13

Ա

Անհատական միջոց	Վճռի կատարման շրջանակներում ձեռնարկվող միջոց/միջոցառում, որը կոչված է վերացնելու արձանագրված խախտման հնարավոր բացասական հետևանքները դիմումատուի համար (օրինակ՝ գործի դատական քննության վերաբացում, ծնողի և երեխայի միջև կապի վերականգնում, արդարացի փոխհատուցման վճարում և այլն)
Արդարացի փոխհատուցում	Վճռի կատարման անհատական միջոց, հատուցման ձև, որի ՄԻԵԴ-ի կողմից հատկացումը Կոնվենցիայով (և դրան կից Արձանագրությամբ) երաշխավորված որևէ իրավունքի խախտման արձանագրման ինքնստինքյան հետևանքը չէ (ի դեպ, ՄԻԵԴ-ի կողմից հատկացումը պետք է լինի «արդարացի», այսինքն՝ հաշվի է առնվում յուրաքանչյուր գործի առանձնահատկությունները, հետևաբար՝ կարող է որոշվել, որ Կոնվենցիայի խախտման արձանագրումն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում է):

Բ

Բարձր պայմանավորվող կողմ

Եվրոպայի խորհրդի անդամ պետություն, որը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Բարեկամական կարգավորում

Կոնվենցիայով նախատեսված հնարավորություն է, որի շրջանակում գործի քննության ընթացքում դիմումատուն և պատասխանող կառավարությունը լուծում են առկա վեճը: Այն կողմերի միջև պայմանավորվածություն է, որը շատ նման է ներպետական օրենսդրության մեջ առկա հաշտության համաձայնության ինստիտուտին:

Բաշխված պատասխանատվություն

հայեցակարգ, որը միջազգային հարթությունում նպատակ ունի ապահովել Կոնվենցիոն համակարգում ազգային ու եվրոպական հարթությունների հավասարակշռությունը և երաշխավորված պաշտպանել ներպետական մակարդակում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, իսկ ներպետական համատեքստում ապահովում է պետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, ներառյալ՝ ՄԻԵԴ վճիռների կատարման գործում պետության իրավասու մարմինների միջև պարտականությունների բաշխվածությունը:

Գ

Գործողությունների ծրագիր

Նախարարների կոմիտե պատասխանող պետության ներկայացրած փաստաթուղթ, որում մոտավոր ժամանակացույցի հետ միասին շարադրվում են այն քայլերի մանրակրկիտ թվարկումը, որոնք պետությունը ձեռնարկելու է ՄԻԵԴ վճիռը լիարժեք կատարելու համար:

Գործողությունների հաշվետվություն

Նախարարների կոմիտե պատասխանող պետության ներկայացրած փաստաթուղթ, որում շարադրվում են այն քայլերը, որոնք արդեն ձեռնարկվել են և հիմնավորվում է, որ դրանք անհրաժեշտ ու բավարար են ՄԻԵԴ վճիռը կատարված ճանաչելու համար:

Ե

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ)

Եվրոպայի խորհրդի (խորհրդակցական) մարմին, որը քննարկում է ԵԽ կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված հարցերը և Նախարարների կոմիտեին իր եզրակացությունները ներկայացնում է հանձնարարական-առաջարկությունների ձևով:

Ը

Ընդհանուր միջոց

ՄԻԵԴ վճռով արձանագրված նմանատիպ խախտումները հետագայում կանխելու նպատակով ձեռնարկված միջոց/միջոցառում, որն անհատական բնույթի չէ (օրինակ՝ նոր օրենքի ընդունում, օրենսդրության կամ պրակտիկայի վերանայում և այլն):

Կ

Կանոն 9
Կոմունիկացիա

հատուկ դիրքորոշում կամ գրավոր տեղեկանք (կոմունիկացիա), որը որոշակի խումբ անձինք/տուժածներ, նրանց իրավախորհրդատուներ, մարդու իրավունքների պաշտպանությամբ և խթանմամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև մարդու իրավունքների ազգային հաստատություններն ու միջազգային կազմակերպությունները (կամ դրանց մարմինները կամ գործակալությունները) ներկայացնում են Նախարարների կոմիտե՝ կոնկրետ վճռի կամ վճիռների խմբի կատարման շրջանակում:

Կանխարգելման ազգային մեխանիզմ

Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվեն-ցիայի կամընտիր արձանագրության ներքո գործող հաստատությունը, որի նպատակն է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխար-գելումն ազատությունից զրկման վայրերում (Հայաստանում այդ դերը վերապահված է Մարդու իրա-վունքների պաշտպանին):

Համոզմունքներից ելնելով հրաժարվող

Քաղաքացի, ում կրոնական համոզմունքներին կամ դավանանքին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը, և որից ելնելով նա հրաժարվում է պարտադիր ժամկետա¬ին զինվորական ծառայությունից:

[Թույլատրելի] հայեցողության շրջանակ

Իրավական այս դոկտրինի ներքո ԵԽ մարմինները, ներառյալ՝ ՄԻԵԴ-ը, ճա-նաչում են անդամ պետության հայեցողության որոշակի սահմաններ, որի շրջանակում պետությունն ազատորեն կատարում է Կոնվենցիայով նախատեսված իր պարտավորությունները:

Մ

Մարդու իրավունքների ազգային հաստատություն

Պետական մարմին, որն անկախ է կառավարությունից, ունի լայն սահմանադրական կամ այլ իրավական մանդատ՝ պաշտպանելու և խթանելու մարդու իրավունքներն ազգային մակարդակում (Հայաստանում՝ Մարդու իրավունքների պաշտպանը)

Մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն

Եվրոպայի խորհրդի երեք հիմնարար արժեքներ, որոնք միաժամանակ այդ կազմակերպության գործունեության հիմնասյուներն են:

Միջանկյալ ռեզոլյուցիա

ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակում Նախարարների կոմիտեի ընդունած փաստաթուղթ, որով արձանագրվում է կոնկրետ վճռի կամ բարեկամական կարգավորման վերաբերյալ որոշման կատարման վիճակը և, ըստ անհրաժեշտության, ներկայացվում են մտահոգություններ կամ արվում են առաջարկներ՝ արդյունավետ կատարելու վճիռը/որոշումը:

Մարդու իրավունքների նիստեր

(այլ կերպ՝ CM-DH հանդիպումներ) ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության շրջանակում Նախարարների կոմիտեին վերապահված գործիք, որը Նախարարների տեղակալների մասնակցությամբ նիստերի ձևաչափով անցկացվում է առնվազն տարին չորս անգամ և որտեղ քննարկվում են Եխ անդամ պետությունների կողմից վճիռների կատարմանն առնչվող հարցեր:

Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ

(մինչև 16.12.2021 թ. օրենսդրական փոփոխությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ) վարչապետի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկված պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձ, որի գործունեությունն ընդգրկում է՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Արդարադատության միջազգային դատարանը, միջազգային արբիտրաժը, հաշտարարությունը և օտարերկրյա դատարանները:

Ն

Նախարարների կոմիտե

Եվրոպայի խորհրդի՝ որոշում կայացնող կառավարական մարմին (որի շրջանակներում իրավահավասար հիմունքներով քննարկվում են եվրոպական հասարակության առջև ծառացած խնդիրների լուծման ազգային մոտե-ցումները) և կոլեկտիվ համահավաք (որտեղ ձևավորվում են վերոնշյալ խնդիրների համընդհանուր եվրոպական լուծումները), որը ԵԽ խորհրդարանական վեհաժողովի հետ միասին պաշտպանում է ԵԽ - ի հիմնարար արժեքներն ու վերահսկում անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը:

Նախարարների կոմիտեի կանոններ

Նախարարների կոմիտեի կողմից հաստատված կանոններ, որոնցով, ի թիվս այլ հարցերի, կարգավորվում են նաև ՄԻԵԴ վճիռների և բարեկամական կարգավորմամբ ա-վարտված գործերով որոշումների կատարման գործընթացի վերահսկո-ղության ընթացակարգն ու պայման-ները:

Պ

Պիլոտային վճիռ

ՄԻԵԴ-ի կայացրած դատական ակտ, որը հստակեցնում է համակարգային խնդրի բնույթը, մատնանշում է պատասխանող պետության կողմից ապահովման ենթակա միջոցը և նպատակ ունի անդրադառնալ կրկնվող դեպքերին ու լուծել ներպետական օրենսդրությունից կամ պրակտիկայից բխող համակարգային պրոբլեմները:

Ս

Սուբսիդիարության սկզբունք

Կոնվենցիայի համակարգի հիմնական սկզբունքներից մեկը, որը ՄԻԵԴ-ի որոշակի համատեքստում նշանակում է, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանության և իրականացման պատասխանատվությունը, ինչպես նաև համապատասխան միջոցների ընտրությունն ավելի շատ ընկնում է Բարձր պայմանավորվող կողմի, քան ՄԻԵԴ-ի վրա:

Վ

Վերջնական վճիռ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռ, որը դարձել է վերջնական, այսինքն՝ մտել է ուժի մեջ:

Վերահսկողություն

Ընթացակարգ, որի ներքո Նախարարների կոմիտեն հատուկ այդ նպատակով որդեգրած մեթոդներով և սահմանված կանոն-ներով ու պրակտիկայով հետևում է ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին:

Վերահսկողական նոր մեթոդներ

Նախարարների կոմիտեի որդեգրած նոր ընթացակարգեր, որոնք 2011 թվականի հունվարից կիրառվում են ՄԻԵԴ վճիռների կատարումը վերահսկելիս:

Վերահսկողության երկուղի/երկընթաց մեխանիզմ

Համակարգ, ըստ որի՝ բոլոր գործերի վերահսկողությունը կատարվելու է ստանդարտ ընթացակարգի համաձայն, քանի դեռ, հաշվի առնելով գործի առանձնա-հատկությունը, որոշում չի կայացվում վերահսկողությունն իրակա- նացնել ուժեղացված ընթացակարգով:

Վճիռների/գործերի դասակարգում

Կարևոր միջոց, որը հստակեցնում է վճիռների կատարման վերահսկողական համակարգի գործունեությունը, իսկ պատասխանող պետությանն օգնում է զատել համակարգային խնդիրները ոչ համակարգայիններից, առանձնացնել ընդհանուր ու մասնավոր միջոցները, ճիշտ գնահատել սեփական ռեսուրսները և դրանք բաշխել ըստ առաջնահերթությունների:

Վերջնական ռեզոլյուցիա

ՄԻԵԴ վճիռների կատարման նկատ-մամբ վերահսկողության շրջանակում Նախա-րարների կոմիտեի ընդունած փաստա-թուղթ, որով արձանագրվում է, որ վճռի կատարման համար անհրաժեշտ բոլոր միջոցներն ապահովված են, վճիռը կատարված է, և կատարման նկատմամբ վերահսկողությունը փակվում է:

Քաղաքական հռչակագրեր

Ինտերլակենի (2010 թ.), Իզմիրի (2011 թ.), Բրայթոնի (2012 թ.), Բրյուսելի (2015 թ.) և Կոպենհագենի (2018 թ.) բարձրաստիճան համաժողովներում ընդունված հռչակագրեր՝ միտված ՄԻԵԴ ապագա զարգացմանը և ՄԻԵԿ իմպլեմենտացիայի մարտահրավերների հաղթահարմանը:

Քաղաքացիական հասարակություն

պետական իշխանությունից անկախ քաղաքացիների ամբողջություն/համա-կարգ կամ անձանց միջև գոյություն ունեցող տնտեսական, մշակութային, իրավական և քաղաքական զարգացած փոխհարաբե-րություններով ժողովրդավարական հասա-րակություն, որը պետական իշխանության մարմինների ուղղակի միջամտությունից պաշտպանված է օրենքով:

R

Restitutio in integrum

Մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնում: